

**ՄՅԵՐ ԲԵՅԼԵՐՅԱՆ  
ԱՐՏԱՔԻՆ ԽԱՎԱՐԻ ՍՏՎԵՐՆԵՐԸ**

**Վաղամեռիկ ընկերոջս՝  
Կարեն Պետրոսյանի հիշատակին**

**«Աստված-մարդ լավողը»  
Թովմասի պարականոն**

**ավետարան**

Տեսքն ամեհի էր, աչքերը՝ մանկական: Ոռնում էր ու արտասվում, իսկ աչքերը ժպտում էին, նույնիսկ երբ արծիվները կտցում էին դրանք: Ջինջ-կանաչ աչքերով ամբողջ գիշեր աղերսագին ատելությամբ նայեց ինձ և հիշեցրեց այն կնոջը, որն աչքերիս մեջ նայելով՝ մերկ կրծքերի արանքում ճզմեց իր նորածին մանկանը: Տեսքն ամեհի էր, աչքերը՝ ջինջ-կանաչ. խուժեց մոլեգին ու ժպտուն, մերկացրեց սուրը, իսկ ես հմայված նայում էի աչքերին: Ուշքի եկա ճնշող լռությունից. չկա ավելի նողկալի բան, քան բռնաբարվող կնոջ լռությունն է: Փորձում էի ազատվել կապանքներից, ձայներ էի արձակում, որ իմը չէին՝ ահավոր էին ու ձգող: Ժպտուն աչքերով զինվորը ելավ կնոջ վրայից, մոտեցավ բարուրին, ոտքից բռնած բարձրացրեց զավակիս, մյուս ձեռքով բարձրացրեց սուրը: Կինս մոտեցավ, մեղմ շոյեց զինվորի ձեռքը, զգուշությամբ գիրկն առավ փոքրիկին, սեղմեց մերկ ստինքներին և նայեց ինձ այնքան, մինչև չդադարեց մանկան լացը: Զգուշորեն բարուրի մեջ տեղավորեց դիակն ու ապշած զինվորի ձեռքից սուրը խլելով՝ ինքնասպան եղավ:

Կան պահեր, որ երբեք չեն ավարտվում, միշտ մնում են քեզ հետ: Գիտես, որ անցել է, բայց կրկնվում է ամեն օր, ամեն վայրկյան:

Կես ժամում սպանվեցին երկու տարին չբոլորած քառասուն մանուկներ, և այնժամ կատարվեց Երեմիա մարգարեի բերանով ասվածը, թե՛ Ռամայում մի ձայն գուժեց. ողբ ու լաց ու սաստիկ կոծ. Ռաքելը լալիս էր իր զավակների վրա և չէր ուզում մխիթարվել, քանի որ նրանք այլևս չկային:

Բեթղեհեմի նորածիններից միայն երկուսը փրկվեցին: Մեկը՝ հյուսն Յովսեփի զավակն էր. կոտորածից մի քանի օր առաջ Յովսեփը, կնոջն ու

զավակին վերցնելով, ուղևորվել էր Եգիպտոս: Մյուսը՝ յոթ օրական մի տղա էր. ծնողները հասցրել էին թաքցնել նրան, բայց իրենք սպանվել էին:

Քաղաքում բոլորը խոսում էին մոզերի, Չերովդեսի ու Յովսեփի տղայի՝ փոքրիկ Չիսուսի մասին, խոսում էին, որ Չերովդեսն անբուժելի հիվանդ է, և նրան մնացել է մեկ-երկու տարվա կյանք: Մարդիկ խոսում էին, ես՝ թաղում էի կնոջս ու զավակիս, նրանք փսփսում էին, ես՝ փող էի կուտակում Եգիպտոս ուղևորվելու համար, ենթադրություններ էին անում, իսկ ես գիտեի, որ կոտորածի պատճառը Յովսեփի զավակն էր և Յովսեփը, որը ոչ մեկին չէր զգուշացրել սպասվող աղետի մասին: Ինձ ավելին պետք չէր իմանալ: Ժպտուն աչքերով զինվորին լափել են արծիվները, Չերովդեսն անբուժելի հիվանդ է, իսկ քյավթառ հյուսնը երիտասարդ կնոջ ու զավակի հետ վայելում է կյանքը:

Ատելությունն ու վրեժը ինձ ուժ տվեցին, և ես մենակ անցա անապատը՝ իրագործելու համար ճշմարիտ անդարադատությունը: Վրեժն ու ատելությունն ինձ զորացրին, և ես՝ սոված ու հյուժված, ի վերջո գտա նրանց: Մութն ընկնելուն պես կամաց սողոսկեցի նրանց տուն: Քամուց օրորվող ճրագը թույլ լուսավորում էր սենյակը: Անկյունում քնած էին Յովսեփն ու իր կինը, իսկ կենտրոնում առաստաղից կախված բարուրն էր: Առաջինը պիտի սպանեի փոքրիկին. Յովսեփն ու Մարիամը մահվանից առաջ պիտի իրենց կաշվի վրա զգային նորածին զավակի կորուստը: Մոտեցա բարուրին: Չէի մտածում, թե ինչպես պիտի այդ անեն, չէի մտածում դժոխքի մասին, և ոչ էլ վախենում էի, որ հոգիս մահվանից հետո կնետվի արտաքին խավարի մեջ: Մարդիկ են արտաքին խավարի ստվերները: Կայծակն ուժեղ լուսավորեց սենյակը. մանչուկը բացեց աչքերն, ու դանակը ձեռքիցս ընկավ: Բարուրի մեջ իմ զոհված զավակն էր. նրա մարմինն իմ ձեռքով էի հանձնել հողին, ձեռքերս դեռ հիշում էին այդ մարմնի բոլոր ծալքերը, աչքերս հիշում էին նրա ջինջ-կանաչ ժպիտը, իսկ ռունգերիս մեջ դեռ թարմ էր բուրմունքը, որ չէի կարող շփոթել աշխարհի ոչ մի ուրիշ բույրի հետ:

Յովսեփն ու Մարիամը լուռ նայում էին ինձ, և մենք արտասվում էինք:

Կան պահեր, որ երբեք չեն ավարտվում, միշտ մնում են քեզ հետ: Գիտես, որ անցել է, բայց կրկնվում է ամեն օր, ամեն վայրկյան:

Ես վերադարձա հայրենիք, որդեգրեցի կոտորածի ժամանակ քաղաքում գտնված ու հրաշքով փրկված այն որբ մանկանը, վաճառեցի տունս, տեղափոխվեցի Իսկարիովտ, իսկ մանուկի անունը զոհված տղայիս հիշատակին կնքեցի Յուդա: